ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

- մարտի 2024 թվականի №---Ա

«ԷՆԵՐԳՈՏԵԽՆԻԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) «ԷՆԵՐԳՈՏԵԽՆԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի դեկտեմբերի 21-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի №ԳԲ//4771-2023 գրությամբ (այսուհետ՝ Գրություն) Ընկերության կողմից նույն թվականի դեկտեմբերի 11-ի №Է-021 գրությամբ ներկայացված դիմում-բողոքը (այսուհետ՝ Դիմում) այլ վարչական մարմիններ վերահասցեագրելու առնչությամբ: Որպես վարչական բողոքի հիմնավորում՝ Ընկերությունը, մատնանշելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը, 35-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 36-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը, պնդել է, որ Հանձնաժողովի կողմից սխալ է կիրառվել և մեկնաբանվել նշված հոդվածի համապատասխան մասը, Հանձնաժողովը չի գործել նշված իրավակարգավորումների պահանջներին համապատասխան՝ դուրս գալով Օրենքի նշված դրույթների շրջանակից, և որպես «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը լիցենզիա տված մարմին, պարտավոր էր ինքը քննարկել դիմումով բարձրացված հարցերը,

2) 2023 թվականի դեկտեմբերի 25-ից հարուցվել է Գրության վերաբերյալ վարչական բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի՝ նույն թվականի դեկտեմբերի 28-ի №ԳԲ//4912-2023 գրությամբ,

3) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը լրացուցիչ որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

4) իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

ա. Գրության իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
- Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հաղորդմամբ կամ դիմում-բողոքով ներկայացված հարցը լրիվ կամ մասնակի ենթակա է այլ վարչական մարմնի իրավասությանը, ապա Հանձնաժողովն այն ամբողջությամբ կամ համապատասխան մասով մուտքագրվելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով դիմողին:
- Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի 10-րդ, 19-րդ և 23-րդ հոդվածների համաձայն՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը (որպիսին հանդիսանում է Շրջակա միջավայրի նախարարությունը՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի և իր կանոնադրության) տալիս է ջրօգտագործման թույլտվությունները, ջրի ազգային ծրագրի պահանջների համաձայն վերահսկողություն է իրականացնում ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության բնագավառում սահմանված նորմերի՝ չափաքանակների և սահմանափակումների կատարման նկատմամբ, ապահովում է ջրային ռեսուրսների պահպանության փաստացի վիճակի մոնիտորինգը և առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման կամ ջրօգտագործման թույլտվության պայմաններին կամ պահանջներին անհամապատասխան ջրօգտագործման վերաբերյալ ամփոփագիր կազմելը և նույն օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված ծանուցագրի հետ բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին ներկայացնելը, որը տեսչական մարմնի համար ստուգում իրականացնելու հիմք է:
- Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի №733-Լ որոշման հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով

բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է: Նշված կանոնադրության 11-րդ կետի համաձայն՝ տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի ոլորտներում, այդ թվում՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ուղղություններով (11-րդ կետի 2-րդ ենթակետ): Նույն կանոնադրության 13-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով տեսչական մարմնի պաշտոնատար անձինք կազմում են իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, ինչպես նաև դադարեցնում, կասեցնում կամ արգելում են իրավախախտում թույլ տված անձանց գործողությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կասեցնում են ստուգվող սուբյեկտի գործունեությունը:

բ. Գրությամբ Դիմումի վերահասցեագրումն իրականացվել է գործող իրավակարգավորումներին համապատասխան, ուստի դրա վերանայման հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Ընկերությունը 2023 թվականի դեկտեմբերի 11-ի №Է-021 գրությամբ դիմելով Հանձնաժողով խնդրել է հարուցել վարչական վարույթ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության անօրինական գործողությունների վերաբերյալ, որն ըստ դիմում-բողոքում առկա տեղեկատվության արտահայտվում է հիմնականում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից վերջինիս տրամադրված ջրօգտագործման թույլտվության պայմանները խախտելու մեջ, որի հետևանքով Ընկերության բնականոն գործունեության համար անհրաժեշտ ջրաքանակը չի բավականացնում, ինչով պայմանավորված Ընկերությունը կրում է նյութական վնասներ, իսկ «Զույգաղբյուր-Գյումրի» ջրատարով հոսող ջրի մեծ մասը «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից թափվում է Ախուրյան գետը, որն ապա հոսում է դեպի Թուրքիա:

Նշված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից և վերջինիս կողմից քննարկվել չեն կարող, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, ղեկավարվելով Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով, Դիմումը վերահասցեագրել է Շրջակա միջավայրի նախարարությանը և Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին: Մասնավորապես, ջրային

ոլորտում Հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի իրավասությունների տիրույթում է գտնվում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործունեությունը՝ իր կողմից տրամադրված լիցենզիայի շրջանակում, այլ՝ տվյալ դեպքում ջրօգտագործմանն առնչվող իրավահարաբերությունների մասով վերահսկողության իրականացման և պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություններով Հանձնաժողովն օժտված չէ, դրանք օրենքով վերապահված են այլ պետական մարմինների: Ընդ որում, լիազորությունների նման բաշխումն ու տարանջատումն ինքնանպատակ չէ, քանի որ հակառակ պարագայում լիազորությունների համադրման արդյունքում կարող է առաջանալ իրավական խառնաշփոթ՝ կապված միևնույն գործունեության (ջրօգտագործման) նկատմամբ պետական հսկողության, միևնույն արարքի (ջրօգտագործման կանոնների ենթադրյալ խախտման) նկատմամբ տարբեր պետական մարմինների կողմից պատասխանատվության ենթարկելու կամ կրկնակի պատասխանատվության հարցերի հետ: Այսպես, տեղին է նաև նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 62-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ջրառի, ջրամատակարարման և ջրօգտագործման կանոնները խախտելու համար, իսկ նույն օրենսգրքի 242-րդ հոդվածը ջրային ռեսուրսների պահպանության մասով նշված կանոնների խախտմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող ու տույժեր նշանակող իրավասու մարմին է ճանաչում շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմնին: Ակնհայտ է, որ քննարկվող հարաբերություններում առաջացող իրավախախտումների մասով Հանձնաժողովը որևէ գործառույթ չունի: Ամբողջ վերոգրյալով պայմանավորված՝ այլ պետական մարմնի կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվության պայմանների հնարավոր խախտումն ինքնաբերաբար չի կարող դիտարկվել որպես Հանձնաժողովի կողմից «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանների խախտում, քանզի, ինչպես արդեն նշվել է, դրանցով կարգավորվում են իրավահարաբերությունների՝ միմյանցից տարբեր շրջանակներ, տրամադրվում և վերահսկվում են տարբեր առաքելություններ ունեցող տարբեր պետական մարմինների

կողմից: Վերոգրյալի ուժով, հարկ է փաստել, որ Ընկերության կողմից վարչական բողոքով ներկայացված պնդումները զուրկ են թե՛ փաստական, թե՛ իրավական հիմնավորումներից, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի վարչական բողոքը՝ վերջինիս կողմից նույն թվականի դեկտեմբերի 11-ի №Է-021 գրությամբ ներկայացված դիմում-բողոքը այլ վարչական մարմիններ վերահասցեագրելու առնչությամբ՝ Գրությունը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մարտի 2024թ.